# *ՍԱՍՈՒՆԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՓԲԸ*

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի
գրանցված կազմակերպություններին

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<**ՍԲԱ**>> **ՓԲԸ** համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզ գ. Սասունիկ, էլ. հասցեն- sasunikiba@mail.ru տնօրեն՝ Կ.Դեմոյան, մինչև 2014թ. մարտի 5-ը, ժամը $12^{00}$-ն:

Հայտերը կբացվեն ՀՀ Արագածոտնի մարզ գ.Սասունիկ 2014թ. Մարտի 5-ին, ժամը $12^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՍԲԱ-ՇՀԱՇՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին

պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 40 թերթ:

*Հարգանքով՝* ***<u>ՍԱՄՍՈՒՆԻԿԻ ԲԱ ՓԲԸ</u>***

Digitally signed by DEMOYAN KARINE 7005560299
Date: 2014.02.21 10:45:48 AMT